

Այսու անթիւս և մեր կը գրուատեմք յիշեալ Ազգասէր անձը, և միանգամայն քաղցր պարտք կզգամք հրապարակապարզել մեր խորին գոհունակութեանց և երախտագիտութեանց հաւաստիքը առ 'Նորին Ազգասէր Մեծապատուութիւն հանդերձ յարգանքս:

Ն. Ռ. Ի. Է. Բ.

'Նոր — 'Նախիջևանցի Մեծապատու Յովհաննէս Մարկոսեան փոփոխեանց երկու հարիւր բուրլի նուիրեց ի նպաստ վերանորոգութեան Վաթողիկէ Տաճարի Մայր Աթոռոյս՝ առաքելով զայնս յանուն Ս. Վաթողիկոսի:

Յիշեալ բարեպաշտ անձի սոյնպիսի նուիրանաց համար մեր շնորհակալութիւնքը հրապարակաւ կը նուիրեմք 'Նորին Մեծապատուութեան:

ԱՐԿԵԱԶՈՒ Ս ԽԱԶ ՎԱՆՔ:

Լ. Երևանցի Մեծ. Պ. Պօղոս Խաչատրեան ոսկեզօծ մի Խաչ նուիրեց Արկեզու Ս. Խաչ Վանուց կաթողիկէին վերայ կանգնեցնելոյ համար:

Յիշեալ Զերմեռանդ անձի նուէրը կգովեմք և շնորհակալութեամբ կհրատարակեմք ի զիտութիւն մերազնեից:

ՍՈՒՐԶԱՆԳԱԿ ԲԻԻԶԱՆԳԵԱՆ:

ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ

Անդղիոյ հիւպատոսարանին կողմանէ հրատարակուած ծանուցում՝ մը կը տեսնուի ատենէ մ'ի

վեր քաղաքիս Խրոպական լրագրաց մէջ, որով Հօճա Ղազար Գրիգորեանի ժառանգորդը կը հրաւիրուին որ իրենց ժառանգորդ ըլլայն ապացուցանող վկայութիւն կրով ներկայանան՝ իրենց իրաւունքը հաստատելու համար:

Յիշեալ ծանուցումէն կը հասկցուի թէ Հօճա Ղազար Գրիգորեան անուն Հայ մը մեռած և ժառանգութիւն թողած է, և թէ անոր ժառանգն եղող անձինք կան Մայրաքաղաքիս մէջ:

Ասանկ ծանուցում մը միայն Քրանսերէն լրագրով հրատարակուելուն մէջ մասնաւոր դիտում մի ըլլալու է. որովհետեւ Հայու մը ժառանգներն հարկաւ Հայ կը լլան:

Ահաւասիկ ծանուցման թարգմանութիւնը:

ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ Հօճա Ղազար Գրիգորեանի:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Ա. Զ. Ս.

Վերջիշեալ ժառանգութեան նկատմամբ մասնակցութեան իրաւունք ունեցողաց կը ծանուցուի՝ որ մերձակայ 'Նոյեմբեր 10 էն սկսեալ՝ ամէն ուրբաթ ցերեկուան ժամը 1 ին (կէս օրէն մէկ ժամ առաջ) նիստ տեղի պիտի ունենայ Անդղիոյ հիւպատոսարանը. ուր Սրբ Քիլիպ Քոնսէիս նկատողութեան պիտի առնու յիշեալ ժառանգութեան մասնակից եղողաց վկայութիւնները և ապացոյցները:

Թրաղիր Թիւ 585:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

'Ներկայ Ամադրովս աւարտեց Արատութեամբեայ Դ. շրջանը, և յառաջակայ 1872 տարւոյս Յունվարէն պիտի ըսկանի Լ. շրջանը՝ իւրաքանչիւր ամիս հրնդական թերթով և պատկերազարդ հրատարակուելով:

Տարեկան բաժանորդագինն պիտի լինի միւսնոյն ԶՈՐՍ ուրբի հանդերձ ծախուքըն ճանապարհի: